ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/2-1-Հ1

19.08.2020 Թ ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/2-1 ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «29» «09» **2020 թ.**

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ագարակ» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Կարապետ Բարսեղյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 2020թ օգոստոսի 19-ին կնքված N ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/2-1 գլխավոր գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանել՝ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թ. դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում:

1.2 Հաստատել պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման նոր օրացուցային գրաֆիկը համաձայն թիվ 1 հավելվածի:

1.3 Հաստատել պայմանաագրով նախատեսված աշխատանքների դիմաց վճարման ժամանակացույցը համաձայն թիվ 2 հավելվածի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 և 2 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

3.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2, ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011035251 ՀՎՀՀ 02698732	«Ագարակ» ԲԲԸ Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Փարպի Հեռ.՝ +374232-3-32-22, +37491-40-78-26 «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ 1150008007517564 ՀՎՀՀ 05003862
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝ ---------- Վ. Գասպարյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն՝ ---------- Կ. Բարսեղյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված թիվ 1

«09» «09» 2020 թ. կնքված

N ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/2-1-Հ1 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Չափաբաժին 3. Կրթական օբյեկտների հիմնանորոգում-3

«ԱՇՏԱՐԱԿԻ Ն. ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՏԱՆԻՔԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻԱՆԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐԻ) ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՆՈՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետ	
		Սկիզբ	Ավարտ
	Բաժին-1		
	Սանհանգույցների վերանորոգման շինարարական աշխատանքներ		
1	Քանդման աշխատանքներ, վերականգնման աշխատանքներ, տեխնիկական աշխատողի սենյակ,դռան բացվածքի ուժեղացման կոնստրուկցիաներ (քանակն է՝ 36 հատ), դռների ապամոնտաժման աշխատանքներ	համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում	համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում
	Բաժին-2		
	Ջրամատակարարում և կոյուղի		
1	Սանտեխնիկական խողովակների ապամոնտաժման աշխատանքներ, կոյուղու և ջրամատակարարման խողովակաշար, կոյուղու և ջրամատակարարման խողովակաշարերի ձևավոր մասեր	համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում	համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում
	Բաժին-3		
	Ջեռուցում		
1	Ապամոնտաժման աշխատանքներ	համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում	համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում

2	Ջեռուցման համակարգ I մասնաշենք	համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում	համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում
3	Ջեռուցման համակարգ II մասնաշենք	համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում	համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում
4	Ջեռուցման համակարգ III մասնաշենք	համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում	համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում
5	Ջեռուցման համակարգ IV մասնաշենք	համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում	համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում
	Բաժին-4		
	Օդափոխություն		
1	Օդափոխություն, օդափոխության համակարգի էլ.մատակարարում	համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում	համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում
	Ընդամենը 2020 թ. կատարվող աշխատանքներ	**համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում**	**համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի առկայության դեպքում**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ. Գասպարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Կ. Բարսեղյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված թիվ 2

«09» «09» 2020 թ. կնքված

N ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/2-1-Հ1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	**դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով, ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
3	45611100/540	**Կրթական օբյեկտների հիմնանորոգում-3** («Աշտարակի Ն. Սիսակյանի անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի սանհանգույցների և տանիքի (այդ թվում ինժեներական կոմունիկացիաների և շինարարական էլեմենտների) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքներ)										**98904000**	**98904000**	**98904000**	**98904000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ **Վ. Գասպարյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

_____ **Կ. Բարսեղյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ԱՇՏԱՐԱԿ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ «АШТАРАК»
"ARMBUSINESSBANK" CJSC
"ASHTARAK" BRANCH

N 33-322

«07» Ամիսդրանիվ 2020

Հավելված 4
«ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով
հրատապ բաց մրցույթի հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N E20-001631
(որակավորման ապահովում)

Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում « Ագարակ »ԲԲԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/2-1 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին 98,904,000 (ինսունութ միլիոն ինը հարյուր չորս հազար) ՀՀ դրամ, (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում:

Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև N ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/2-1 ծածկագրով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/2-1 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

Հասցե՝ ՀՀ, ք. Աշտարակ, Վ. Պետրոսյան 16; Հեռախոս՝ (+37460) 37 25 33; Էլ.փոստ՝ ashtarak@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: В. Петросян 16, г. Аштарак, РА; Телефон: (+37460) 37 25 33; Эл.почта: ashtarak@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 16 V. Petrosyan, Yerevan, Armenia; Telephone: (+37460) 37 25 33; E-mail: ashtarak@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կառավարիչ՝ **Լ. Շուխյան**

ՀՍԴԳԲ պետ՝ **Լ. Մանուկյան**

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ԱՇՏԱՐԱԿ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ «АШТАРАК»
"ARMBUSINESSBANK" CJSC
"ASHTARAK" BRANCH

N 33-321

«07» Սեպտեմբեր 2020թ

Հավելված 5
«ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով
հրատապ բաց մրցույթի հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N E20-001630
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ բենեֆիցիար) և « Ագարակ »ԲԲԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/2-1 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 9,890,400 (ինը միլիոն ութ հարյուր իննսուն հազար չորս հարյուր)ՀՀ դրամ(այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքված N ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/2-1 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պրիցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/2-1 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) սույն երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

Հասցե՝ ՀՀ, ք. Աշտարակ, Վ. Պետրոսյան 16; Հեռախոս՝ (+37460) 37 25 33; Էլ.փոստ՝ashtarak@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: В. Петросян 16, г. Аштарак, РА; Телефон: (+37460) 37 25 33; Эл.почта: ashtarak@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 16 V. Petrosyan, Yerevan, Armenia; Telephone: (+37460) 37 25 33; E-mail: ashtarak@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կառավարիչ՝ Լ. Շոքոյան

ՀՍԴԳԲ պետ Լ. Մանուկյան